



05/27179-15
1/17.1/16910-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն № 1207 Ա

ք.Երևան

<18> 11 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 303-Ա ՀՐԱՄԱՆՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝
ՀՀ) օրենքի 72-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1527-Ն
որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված ՀՀ տարածքային կառավարման և
արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ՏԿ և ԱԻՆ) կանոնադրության 15-րդ
կետի 7-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Սահմանել՝

- 1) ՀՀ ՏԿ և ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի.
- 2) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի.

3) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ փրկարարական ուժերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի.

4) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ ծառայության կազմակերպման վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 4-ի.

5) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ կադրերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 5-ի.

6) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ քաղաքացիական պաշտպանության վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 6-ի.

7) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ օպերատիվ կառավարման վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 7-ի.

8) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 8-ի.

9) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ Երևան քաղաքի փրկարարական վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 9-ի.

10) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 10-ի.

11) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ Արարատի մարզային փրկարարական վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 11-ի.

12) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 12-ի.

13) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 13-ի.

14) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 14-ի.

15) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 15-ի.

16) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 16-ի.


17) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 17-ի.

18) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 18-ի.

19) ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 19-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի մարտի 29-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» N 303-Ա հրամանը:

3. Հրամանը հայտարարել ըստ առնչության:



Ա.Երիցյան